№ 73 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 10 ԱՊՐԻԼԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 10 ԱՊՐԻԼԻ № 73

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուրլի, կես տարվանը 5 ամսվանը 6 բուրլի.
Առանձին համարները ՍԱՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում պրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամենլեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԴՐԻԴՈՐ ԱՐԾԲՈՒՆԻ

ՄՇԱԿ

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSHAK“.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պիտիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՂԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ամսին 9-ին, առաւօտեան ժամը 6-ին, վախճանվեց

ՍԱՐԳԻՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԲԱՂԴԻԵԱՆՑԸ,

որի մասին վշտահար կինը, զաւակները և փեսան յայտնում են սրտի կսկիծով ծանօթներին և ազգականներին։ Հոգեհանգիստը տեղի կունենայ այսօր, երեքշաբթի, ապրիլի 10-ին, երեկոյեան ժամը 7-ին, հանգուցեալի ընակարանում (Պակէվիչի փողոց, տուն № 11)։ Հոգեհանգստից յետոյ մարմինը երեկ. ժամը 9—10-ին կը փոխադրվի երկաթուղու կայարանը, որտեղից կուղարկվի Ագուլիս, հանգուցեալի հայրենիքը, այդտեղ թաղվելու համար։

ԱՅՍՕՐ, երեքշաբթի, մարտի 10-ին
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
կայանալու է

Գրական-երաժշտական-դրամատիկական երեկոյթ,

որից գոյացած արդիւնքը յատկացվում է գաւառում գր.-ընթերցարանի շէնք կառուցանելու համար, ՀԵՏԵՒԵԱԼ ԾՐԱԳՐՈՎ.

I
ՊԱՏՇԱՃ ԿԱՐԳԵՐ
Վօդեվիլ 1 գործ.
հեղին. Բիւբիւնի
Մասնակցում են տ. Հ. Աբէլեան, օր. օր. Մ. Մելիք-Աղամեան, Թ. Մելիք-Աղամեան, պ.պ. Վ. Միրզոյեան և Բ. Եսայեան։

II
ՂԱԶ. ԱՂԱՅԵԱՆԻ ԿԵԱՆՔԸ
Կը դասախօսէ Մ. Մատէոսեանը։

III
ՀԱՄԵՐԳ
որին մասնակցում են տ. Ե. Աֆրիկեան, օր. Տիգէնհաուզէն, պ. պ. Վրոյր, Ա. Մելիքեան, Ա. Զմշկեան, Մ. Աղայեան, Շ. Տպեան և խումբը։

Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին։

Տոմսակները 50 կոպ.-ից մինչև 2 ր. վաճառվում են Ընկ. գրասենեակում (Աբաս-Աբատ. դեան հրապ., № 7, սեփ. տուն)։ 238. 1—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ՕԲՕՒ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Բաժանմունքը Թիֆլիսում, Դօղ. պր. 21, տուն Արմենական Ընկ., տէլէֆօն № 355.
Պահեստումիցս կան մեծ բանակութիւնամբ ընտիր պաստառներ ամենավերջին ոճիով,
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչև 6 ր. իւրաքանչիւր բուրգն։
Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում.
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԶԱՐ։
(Ե.ու.) առ. 154. 50—9

Հոյս է տեսել եւ վաճառվում է
Կ. Հ. Բ. ԸՆԿ. ԱՒ. ՊՕՂՈՍԵԱՆ ՖՕՆԴԻ արդիւնքով հրատարակված
„Դարևանային ջրեր“
գիրքը, Ի. Ս. Տուրգենեվի,
թարգմ. Լ. Դանիէլեանի
Դինն է 35 կոպ.
Գումարով գնողներին զեղչ։
(ու.ե.) առ. 221. 3—3

ԲԺՇԿ
Գր. ՄԱԿԱՐԵԱՆ
Ներքին եւ երեխայոց
հիւանդութիւններ
Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում Գանձակայա փողոց, տուն Սէյլանովների, № 18, տէլէֆօն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(Ե.Հ.Կ.) առ. 819. 100—85

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ
(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
6—8 ապրիլի

Կ. Պօլիս.—Իտալական 2 ռազմանաւ ռմբակոծեցին Սամօսի գլխաւոր քաղաք Վատին։

Կում-Կալէն ռմբակոծող ռազմանաւերը ցեր. ժամը 3-ին դիմեցին Թենէդոսի ուղղութեամբ։ Օսմ. գործակալութիւնը հաղորդում է, որ ռմբակոծութիւնից թիւրքերի մօտ վիրաւորվեց 1 զինուոր, սպանվեց 1 ձի և մի զորանոց հրդեհվեց։

Իտալացիք խզել են հեռագիրը Եգէյեան ծովում։

Թիւրքերը լողացող ականներ են դրել Դարդանէլում։ Նաւագնացութիւնը բոլորովին ընդհատվել է։

Պաշտօնական հաղորդագրութեան համաձայն, միայն իտալական 8 ռազմանաւ ռմբակոծեցին Դարդանէլի մուտքի մօտի բերդերը։ Մամանաւոր տեղեկութիւններին նայած, ռմբակոծութիւնը շարունակվել է դարձեալ ցեր. ժամը 5-ին։

Մինիատրների խորհուրդը խորհրդակցում է մեծ վէզիրի մօտ։

Իտալական նաւատորմը սկսեց ռմբակոծել Քիսսը և Բօդօսը։

Դարդանէլի, Սամօսի և Բօդօսի ռմբակոծութիւնները համարվում են միայն ցոյց, որի ժամանակ զօրք է իջեցված որևէ կղզում։ Բերդերը չը վնասվեցին։

Պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է, որ իտալացիները երէկ ռմբակոծում էին Դարդանէլը 10 կիլօմէտր հեռաւորութիւնից, որի պատճառով և կրակը ազատվեցաւ։ Այսօր իտալացիք նեղուցի առաջ չերեւացին։

Նաւային ընկերութիւնները, բողոքելով Դարդանէլը փակելու դէմ, պահանջում են վարձահատուցումն հատուկ նաւերի համար։

Թիւրքական մամուլը դատապարտում է իտալական ցոյցը, որ ստիպեց ամօթաբար յետ նահանջել։ «Թանինը» հեգնաբար շնորհակալութիւն է յայտնում իտալացիներին, որ թնդանօթների պարպումով նշանակալի դարձրին նոր պալատի բացումը։ «Սաբահը» դարմանում է, որ իտալացիք հանդէս եկան առաջ, քան մեծ պետութիւնները հաշտարար փորձի դիմաց պատասխան տանալը։

Մայրաքաղաքում լիակատար հանգստութիւն է։ Անհնարին է նեղուցն անցնել։

Հռոմ.—Ստեֆանիի գործակալութիւնը հերքում է այն տեղեկութիւնը, թէ երէկվայ ռմբակոծութեան ժամանակ իտալական 1 ռազմանաւ վնասվել է։ Թիւրքաց նաւատորմը դուրս չեկաւ Դարդանէլից։ Երեւց միայն մի ականանաւ, որը սակայն իսկոյն անյայտացաւ։

«Պօպօլօ-Ռոմանօ» եգէյեան ծովում ձեռնարկված գործողութիւնների առիթով գրում է. «Չէ կարելի ասել, թէ Իտալիան լիակատար ուշադրութիւն ցոյց չը տուեց դէպի սուլթանը և մեծ պետութիւնները ծայրայեղ միջոցներ սկսելուց առաջ»։

Ստեֆանիի գործակալութիւնը յայտարարում է հետեւեալը պաշտօնական հաղորդագրութեան հիման վրա. «Ծովային ոյժերը փայլուն կերպով կատարեցին իրանց յանձնարարութիւնը Եգէյեան ծովում։ Նաւատորմի գործողութիւնները նպատակ չունէին ռմբակոծել և գրաւել Դարդանէլը և զօրք իջեցնել ցամաքը։ Մեկնելու ժամանակ նաւատորմը զինուորներ չը վերցրեց։ Ապրիլի 4-ի գիշերը թագաւորական ռազմանաւերը կարեցին ստորջրեայ հեռագրագիրը Դիմբրօքի և Դարդանէլի միջև և երկու հեռագրագիծ Լէմնոսի մօտերը։ Մի մասը նաւատորմից ուղարկվեց առաջ, հրաման ունենալով արեւածագին հասնել Դարդանէլի մօտ և հարկադրել օսմ. նաւատորմին դուրս գալ նեղուցից, իսկ ապա ռմբակոծել նրան։ Երբ թագաւորական ռազմանաւերն անցնում էին նեղուցի ճանապարհով, երեւաց թիւրքական մի հակառականաւ։ Միաժամանակ Դարդանէլի երկու ափերից հեռաւոր տարածութիւնից կրակ բացվեց։ Իտալական նաւատորմը ստիպված էր պատասխանել և մօտաւորապէս մինչև ժամը 2-ը ռմբակոծել արտաքին ամրութիւնները։ Թիւրքաց հակառականաւը անմիջապէս թաղվեց նեղուցի մէջ։ Իտալացիները ոչ մի կորուստ չունեն։ Նաւատորմի անջատված մասը, հասնելով իր նպատակին, վերադարձաւ դէպի Իտալիա»։

Ծովային ցոյցը ընդունվեց խանդավառութեամբ։ Սրճարաններում և փողոցներում ոգևորութեամբ քնվում են հեռագիրները։ Լրագիրները լոյս են տեսնում արագարդ հրատարակութիւններով։ Ծագում են բազմաթիւ լուրեր։ Նկատելի է համակրանք առ Ռուսաստանը։ Հատարակութեան մէջ յաճախ լսվում են բացագանչութիւններ՝ «Կեցցէ Ռուսաստանը»։

Իտալական մի յածանաւ, ռմբակոծելով առաւօտը Շէյխ-Սաիդ բերդը Կարմիր ծովում, մեկնեց դէպի հիւսիս։

Ստեֆանիի գործակալութիւնը հաղորդում է. «Առաջին զօրաբանակի հրամանատարը հեռագրով յայտնեց, որ այսօրվանից այլևս չէ գործում Փոքր-Ասիան թիւրքական Արշիպելագոսի հետ միացնող հեռագիրը, որ անցնում էր Մարմարեա ծովով ու Բօդօսով։ Սամօսի մօտերը ջրասոյզ է արված թիւրքական մի նաւ»։

—

Հռոմ.—Դարդանէլի մօտ նաւատորմի կատարած գործողութիւնների առիթով «Տրիբունան» ասում է, «Նաւատորմի գործողութիւնները ապացուցեցին, որ Իտալիայի գործողութիւնների ազատութիւնը մի քանի ծովերում, առանձնապէս Եգէյեան ծովի վրա, անսահմանափակ է։ Եր.-թիւրքերը ընդդիմադրութեան ուրիշ միջոցներ չունեն, բացի համաշխարհային առևտրի նեղուցը փակելուց, որ Իտալիան այժմ նկատի չառաւ։ Այդ պատճառով նաւատորմը կը հեռանայ Կ. Պօլսի դռնեբի մօտից, որտեղ հրաժեշտ տուեց, սակայն առժամանակ»։

Ստեֆանին հաղորդում է. «Կառավարութիւնը յայտնում է, որ մտադիր չէ սահմանափակել պատերազմական գործողութիւնների դաշտը և բացառութիւն է անում լոկ Ադրիատիկ և Յոնական ծովերի համար, ուր ռազմի գործողութիւնները հակառակ կը լինեն իտալական շահերին»։

—

Օդեսսա.—Առևտրի մինիստրի առաջարկութեամբ ռուսական ընկերութեան շոգենաւերը այսուհետև գնալու են մինչև Կ. Պօլիս։

Դարդանէլի փակումը անհանգստութիւն առաջ բերեց ամբողջ Սև և Ազով ծովերի ափին։

Սոֆիա.—Դարդանէլի ռմբակոծութեան առիթով նացիոնալիստական օրգանները անհրաժեշտ են գտնում, որպէսզի Բոլգարիան միջոցներ ձեռք առնէ պաշտպանելու իր շահերը։ Կառավարական շրջաններում տիրում է լիակատար հանգստութիւն։ Ռմբակոծութիւնը համարում են ցոյց, որ ոչ մի երկիւղ չէ ներշնչում։

—

Գաբէս.—Մի վաշտ հեծելազօր Սֆակսից և Բէնգազդանից դուրս եկաւ Տրիպոլիսի սահմանում արգելք լինելու իտալացիներին՝ օգտվել Թունիսի գծից պատերազմական նպատակների համար։

—

Լօնդօն.—Լլօյդի գործակալութեան տեղեկութիւնների համաձայն Թենէդոս կղզուց՝ ցեր. ժամը 4 ու 30 բոպէին իտալական նաւատորմը 15 ռազմանաւերից բաղկացած նկատվել է Իմբրոսից գալու ժամանակ. լսվում է թընդանօթաձգութիւն։

—

Վիէննա.—Պատգամաւորների պալատ։ Պատգամաւոր Պանցը հարցապնդեաց [illegible] դեօք, արտաքին գործերի մինիստրութիւնը Իտալիայի պատերազմական գործողութիւնների մասին, ինչպէս է մտադիր մինիստրութիւնը վերաբերվել դէպի ստեղծված դրութիւնը, ինչպիսի միջոցներ է կամենում ձեռք առնել պետութեանը սպառնացող վտանգը իր ժամանակին ու իրապէս խափանելու։

Մամուլը երկիւղ է յայտնում Իտալիայի գործելակերպի վերաբերմամբ։ Լրագիրների մեծ մասը յոյս ունի, թէ միայն ցոյց է եղել։ «Նէյէ-Ֆրէյէ-Պրէսսէն» գրում է, որ Դարդանէլը ռմբակոծելով Իտալիան ապտակ է տալիս ամբողջ Եւրոպային։

—

Օդեսսա.—Բօրսային կոմիտէտը որոշեց Դարդանէլի ռմբակոծութեան առիթով մինչև յետագայ դէպքերը պահել հանգստութիւն և չը կանգնեցնել հացահատիկի գործողութիւնները։ Բոլոր արտասահմանեան նաւային ընկերութիւնները դադարեցրին հերթական ապրանքների ընդունելութիւնը և ճանապարհորդական տոմսերի վաճառումը։

—

Պետերբուրգ.—Կ. Պօլսի ֆինանսական գործակալը պաշտօնապէս տեղեկացնում է, որ թիւրքաց կառավարութիւնը արգելեց չէզոք պետութիւնների նաւերին անցնել Դարդանէլով։

—

Բերլին. — Մամուլը իտալացիների ռմբակոծութիւնը ընդունում է անսիստեմ ու քաղաքականապէս չը մըտածված, քիչ համակրանք է ցոյց տալիս իտալացիների հասցէին, խորհուրդ է տալիս կառավարութեանը խուսափել այնպիսի քայլերից, որոնք կարող են թուլացնել Թիւրքիան։

Լէվանտի գերմանական նաւային ընկերութիւնը կարգադրեց պահել նաւերը թիւրքական ջրերում ցնոր կարգադրութիւն։

—

Լօնդօն. — Համայնքների պալատ։ Սատաս-սեկրէտարի օգնական Օկլէնդ Դարդանէլը փակելու մասին ուղղված հարցապնդման առիթով ասաց. «Մեր ստացած տեղեկութիւնները պակասաւոր են, սակայն լրագրական տեղեկութիւնները հաստատում են, որ Դարդանէլը փակված է։ Դիտակցում ենք լիովին, որ Դարդանէլի փակումը լուրջ նշանակութիւն ունի բրիտանական առևտրի համար»։

—

Կ. Պօլիս.—Դեսպան Գիրսը սուլթանին յանձնեց իր հաւատարմագրերը։ Ունկնդրութիւնը տևեց մի ժամ։

—

Կ. Պօլիս.—«Թանինի» ասելով, Բ. Դուռը մերժեց խաղաղ բանակցութիւնները, մինչև որ չապահովվի Թիւրքիայի գերիշխանութիւնը ագրիկական նահանգներում։

—

Բէլգրադ.—Դարդանէլի ռմբակոծութեան տեղեկութիւնը չափազանց անհանգստացնում է, թէև պաշտօնական շրջանները յոյս ունեն, թէ Իտալիան պատերազմական գործողութիւնները չի փոխադրի Բալկան։ Բայց և այնպէս ընդհանուր երկիւղ է պատել գալիք բարդութիւններից։

«ՏԻՏԱՆԻԿԻ» ԱՂԷՏԻ ԾՈՒՐԱԸ
(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
6—8 ապրիլի

Նիւ-Յօրկ.—Ճանապարհորդներից մի քանիսը պատմում են, որ «Տիտանիկի» վրա իրարանցում չեղաւ. մի քանի կանայք հրաժարվում էին թողնել իրանց ամուսիններին և միայն ոյժով են նստեցվել նաւակները։ Դիշերը հրաշալի էր, ծովը միանգամայն հանգիստ էր։ Վերջնական խորտակումից առաջ շոգենաւը թեքվեց, որի ժամանակ նաւի ծայրը յամենայն դէպս 150 ֆուտ բարձր էր ծովի մակերեւոյթից։ Այդպէս նա մնաց հինգ բոպէ իբրև սև զանգուած հորիզոնի վրա, յետոյ շրջվեց մի կողքի վրա ու անյայտացաւ ջրի մէջ։ Միաժամանակ լսվեց սիրտ մորմոքող աղաղակ ու ճիչ՝ հարիւրաւոր բերաններից, որոնք օգնութիւն էին աղերսում։ «Տիտանիկի» զոհերի թիւը, հաշված նաև «Կարպատիսի» վրա մեռածներին, 1601 է։ Հերքվում է այն տեղեկութիւնը, թէ նաւապետը անձնասպան եղաւ։

Ազատվածներին օգնող յանձնաժո-

ղովը հաշիւ տուեց դժբաղդութեան մասին մամուլի մէջ. «Կիրակի օրը, երեկոյեան ժամը 11 ու 40 ր. «Տիտանիկը» ընդհարվեց ուշ նկատած սառցակոյտի։ Նաւի ճեղքուածքները նկատվելուց յետոյ ճանապարհորդներին առաջարկվեց հագնել ազատարար գօտիներ։ Թողնվեցին նաւակներ։ Շոգենաւը ջրասոյզ եղաւ ժ. 2 ու 20 ր.։ «Կարպատիա» նաւը եկաւ առ. ժամը 4-ին։ Առաջին կարգի ճանապարհորդների թիւն էր 330, որոնցից ազատվեցին 210-ը. երկրորդի՝ 320, ազատվեցին 125-ը. տախտակամածների վրայի՝ 750, ազատվեցին 200. նաւաստիների թիւն էր 940, ազատվեցին 210։

Սենատի քննիչ մասնաժողովը այսօր հարցաքննեց «Ուայտ-Ստառի» տնօրէն Իսմէյին։

—

Լօնդօն.—Համայնքների պալատ։ Առևտրի մինիստրը պատասխանելով «Տիտանիկի» մասին ուղղված հարցապնդումներին, ասաց, որ առևտրի մինիստրութիւնը նոր կանոններ կը մշակէ ազատարար նաւակների համար։

—

Բերլին.—Ամեն տեղից տեղեկութիւններ են ստացվում, որ «Տիտանիկը» ունէր ազատարար նաւակներ միայն ճանապարհորդների $^1/_3$-ի համար, ընդամենը 18 հատ։ Պաշտօնական փաստերի համաձայն՝ գերմանական նաւային ընկերութիւնները պահում են նոյնպէս $^1/_3$-ի համար նաւակներ։ Պետական կուսակցութիւնը շտապով առաջարկութիւն ներկայացրեց ըէյխստագին՝ աւելացնելու ազատարար նաւակների թիւը։

—

Նիւ-Եօրկ.—«Ուայտ-Ստառը» հաղորդում է, որ վերջնական հաշուի համաձայն, «Տիտանիկի» հետ պատահած դժբաղդութեան ժամանակ փրկվել են [illegible]։

Կառավարութիւնը պատուիրագրեց անդրատլանտեան շոգենաւերին ընթանալ «Տիտանիկի» վերցրած արագութիւնից պակաս արագութեամբ։

Սենատի մասնաժողովը որոշեց թոյլ չը տալ Ամերիկայից մեկնել «Ուայտ-Ստառի» նախագահ Իսմէյին, չը նայած որ նա կամենում է անմիջապէս Լօնդօն մեկնել։ Ձերբակալված են «Տիտանիկի» նաւատիներից 12-ը և 4 օգիցեր։

—

Բերլին.—Փոխ-կանցլեր Դելբրօկ պատասխանեց հարցապնդման, թէ կառավարութիւնը ձեռնարկել է վերաքննելու շոգենաւերի վրա ճանապարհորդների կեանքն ապահովող կանոնները։

—

Բերլին.—Գերմանական նաւային ընկերութիւնները, ի հերքումն «Ֆրանկ. Ցայտունգի» տեղեկութիւնների, յայտնում են, որ ազատարար նաւակների թիւը պահանջի համեմատ է։

«Նորդ-Դայչէ-Ալգ.-Ցայտը» գտնում է, որ չէզոք մեծ պետութիւնները չեն կարող արդեօք լինել Դարդանէլի փակմանը։

—

Վաշինգտոն.—Սենատը կարծիք յայտնեց, թէ անհրաժեշտ է միջազգային պայմանագրեր կնքել ովկիանոսային շոգենաւերի վերաբերմամբ։

ԴԱՐԴԵԱԼ ՄԱՐՕԿԿԵԱՆ ՀԱՐՑԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6—8 ապրիլի

Պարիզ.—Արտաքին գործերի մինիստրութեան մէջ հեռագիր ստացվեց Ֆէցից, որ հաստատում է, թէ դրութիւնը վատթարացել է։ Ամիսկիի ցեղի յարձակումը Բօրաժի վրա յետ է մղված։ Մի քանի մեռցած ցեղեր ջարդել են դուարտերի խմբին։

Ֆէցից անթել հեռագրով երեկոյեան ստացված տեղեկութիւնների համաձայն՝ Դարէլ.Մահզէնում ապաստանած անձինք այժմ գտնվում են գեներալ Բրիւլիարի գլխաւոր բանակատեղում։

Արտաքին գործերի մինիստրութիւնը հաղորդում է, որ կուից յետոյ Միկէնէյէից ուղարկված զօրքերը գրաւել են ապստամբների դիրքերը Ֆէցում։ հանգստութիւնը վերականգնված է։

Մինիստրների խորհուրդը հաստատեց Բէնիօյին տրված հրահանգները։

Ֆէցում մի ճակատամարտում ընկել են 8 հոգի։

—

Պարիզ.—Հավասի գործակալութիւնը հաղորդում է, որ Մուանիէն կարգադրեց Կազաբլանկից, Մէկինէից ուղարկել զօրքեր Ֆէց գնացած զօրամասի փոխարէն։ Միլերանը առաջարկեց Մուանիէին տեղեկացնել կառավարութեանը, թէ անհրաժեշտութիւն կայ արդեօք զօրքեր ուղարկելու Մարօկկո։

Հավասի գործակալութիւնը հաղորդում է, որ Ֆրանսիան Մարօկկոյում ունի 20,000 զինուոր, որոնցից 6000-ը գտնվում են Մէկինէկա և Ֆէց հանդներում։ Շերիֆի զօրքերի թիւն է 6000, որոնցից 4000-ը Ֆէցում են։

Բէնիօյի հեռագիրներից երևում է, որ սուլթանը պաշարվեց իր պալատում և միայն սոսկ պալատական գնդի պաշտպանութեան ներքոյ։ Մուլայ-Հաֆիդը և Մահզէնը աջակցում են ֆրանսիական իշխանութիւններին։ Ապստամբութիւնը երևաց դաւադրութեան հետևանք։ Գիշերս հանգիստ անցաւ։ Առաւօտը հրացանաձգութիւնը վերսկսվեց։

Մամուլը, սառնասիրտ մնալով ու յորդորելով հասարակական կարծիքին հանգիստ մնալ, չէ թագցնում այն երկիւղները, որ ներշնչում են Ֆէցում կատարվող դէպքերը։ Առանձնապէս աննպաստ ազդանշան է համարվում այն, որ ազգաբնակութիւնը միացել է ապստամբ զինուորներին, որ կարող է ցոյց տալ երկրի դժգոհութիւնը հովանաւորութիւն հաստատելու։ Լուրջ անհանգստութիւն է ստեղծում նաև Արևելեան Մարօկկոյի ցեղերի յուզմունքը։ Մասնաւորապէս է, որ Մարօկկոյի զինուորական կազմակերպութեան մէջ արվել են խոշոր սխալներ. հարկ չը կար այնպէս մեծ ինքնուրոյնութիւն տալ շերիֆի զօրքերին. հարկաւոր էր աւելի շատ ֆրանսիական ոյժեր կենտրոնացնել Մարօկկոյում։

—

Ֆէց.—Սիֆրուից եկած զօրապետ Ֆելլերը գրաւեց հարաւային ամրոցը։ Սպանվեցին երկու օֆիցէր և մի զինուոր. մէկը անհետ կորաւ։

—

Ֆէց.—Կռիւը շարունակվում է։ Թընդանօթաձիգ վաշտը ոմբակոծում է ապստամբների դիրքերը։

—

Պարիզ.—Ֆէցում սպանվել են չորս ֆրանսիացի օֆիցէր-հրահանգիչներ։

—

Տանժէր.—Ֆէցից հաղորդում են, որ ապստամբները զիջանաւ արվեցին և կալանաւորվեցին։ Լիակատար հանգստութիւն [illegible]

Ֆէցի տեղացի ապստամբների պարագլուխները հպատակութիւն յայտնեցին։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6—8 ապրիլի

Լիվադիա (պաշտօնական). — Այսօր Լիվադիայի պալատական եկեղեցում պալատական հոգևորականութիւնը մատուցեց պատարագ Նոցին Մեծութիւնների և Օգոստափառ Զաւակների ներկայութեամբ։ Հրաւիրված էին նաև պաշտօնական անձինք։

Պատարագից յետոյ պալատի մեծ դահլիճում կայացաւ նախաճաշ Բարձրագոյն ներկայութեամբ։

—

Պետերբուրգ.—Պետական Խորհուրդը երկար վիճաբանութիւններից յետոյ, տարբերական դպրոցներում դասաւանդութեան լեզուի հարցի նկատմամբ ընդունեց իշխան Օբօլէնսկիի հետևեալ բանաձևը. «Այն տեղերում, ուր դպրոց մտնող երեխաները չեն խօսում ռուսերէն, ուսման առաջին երկու տարվայ ընթացքում դասաւանդողը կարող է օգտվել սաների մայրենի լեզուից բերանացի նրանց հետ բացատրելու համար այն չափով, որպիսին այդ անհրաժեշտ է դասաւանդվող առարկան նրանց կողմից հասկանալու համար»։ Բոլոր միւս առաջարկութիւնները խորհուրդը մերժեց։

Նոր ճանապարհների խնդրով զբաղվող մասնաժողովը սկսեց քննել այն նախագծերը, որ ներկայացված են մասնաւոր միջոցներով Սև-ծովի կովկասեան ափին երկաթուղի կառուցանելու մասին։

—

Ծալտա.—Ներքին գործերի մինիստրը մեկնեց Պետերբուրգ։ Եկաւ արդարադատութեան մինիստրը։

—

Բօսոսվ Դ./վ.—Հայանտոիկ վաճառող Ֆիրմաները արտակարգ ժողովում որոշեցին հեռագրով դիմել Կոկովցեվին և թախանձագին խնդրել ամեն կերպ աշխատել վերացնել այն մի շարք դժբաղդութիւնները, որ կարող են առաջ գալ այժմ Դարդանէլի փակումից յետոյ։

—

Թաւրիզ.—Ձերբակալվեցին հինգ Ֆէդայիներ։ Մէկի տանը գտան Սաթթար խանին պատկանող ռումբերից։

Մարաղայում ազգաբնակութեան մէջ յուզմունք է սկսվել հացի թանգութեան պատճառով։

—

Խոյ.—Օմէր-խանի և Իբրահիմ-աղայի միջև վէճ ծագեց։ Օմէր-խանի զինված մարդիկ սկսեցին չորս կողմից դիմել դէպի Հումբէտ գիւղը, որ գրաւել է Իբրահիմ աղան։ Որպէսզի արգելք լինեն զինված ընդհարման, թիւրքերը ուղարկեցին 30 ասկէրներ։ Բայց և այնպէս տեղի ունեցաւ հրացանաձգութիւն։ Երկու կողմից էլ կան սպանվածներ և վիրաւորվածներ։ Հումբէտ մաւ ասկէրների մի զօրախումբ։

—

Պարիզ.—Բրիսաօնի ազգային թաղումը կայացաւ հոծ բազմութեան և նախագահ Ֆալիէրի ներկայութեամբ։ Ճառեր արտասանեցին Պուանկարէն, Էտիէնը, Դիւբոստը։ Սգերթին, շրջապատված զօրքերով, ուղեկցում էին մինիստրները, պարլամենտի անդամները և դիպլոմատիական մարմինը, բազմաթիւ պատգամաւորութիւններ։ Հանդուցեալը հողին յանձնվեց զինուորական պատիւներով։

—

Վիէննա.—Կայսրը յանձնարարեց ֆինանսների մինիստր Լուկաչին նոր ունգարական կաբինէտ կազմել։

—

Վիէննա.—Պատգամաւորների պալատ։ Խօրվատիայում օտանմանադրական երաշխաւորութիւնները վերացնելու մասին ուղղված հարցապնդումների առիթով բոլոր պալատական կուսակցութիւնների ներկայացուցիչները համերաշխութիւն յայտնեցին խօրվատներին և խրախուսեցին վերջիններին՝ շարունակելու կռիւը մաջարների ճնշումների դէմ։ Մնացած բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչները միացան Խօրվատիայի նկատմամբ վարվող հակասահմանադրական ըէժիմի դէմ եղած բուռն բողոքներին։

—

Բուդապեշտ.—«Պեստի-Խիրլապը» տեղեկացնում է, որ Կուէն-Խեդերվարին կառավարական կուսակցութեան ժողովում յայտնել է, թէ Ունգարիան պէտք է լիակատար բաւարարութիւն պահանջէ աւստրիական պրեմիէրի ճառի համար։ Լրագիրների մեծ մասի կարծիքով Աւստրիայի միջամտութիւնը վատթարացրեց Խօրվատիայի դրութիւնը։

—

Լիսաբոն.—Կառավարութիւնը Տիմոր 4000 զինուոր ուղարկեց անկարգութիւնների պատճառով։

—

[illegible]

րէսը փակվեց։ Հետևեալը—Լօնդօնում։

—

Կ. Պոլիս.—Անատոլիայից և Մակէդոնիայից հաղորդում են անտուղ ցրտերի մասին։ Մօնաստիրում չորս օր շարունակ ձիւն է գալիս։ Օրխիդում շերամապահութիւնը ջնջվել է։

—

Բերլին.—Ամբողջ մամուլը տալիս է պետական օդագնացութեան կոմիտէի կոչը, որ հրաւիրում է գերմանական ազգին հաւաքաբերել գերմանական օդագնացութեան գործի և գերման օդագնացների համար—ազգային օդագնացութեան ֆոնդ հիմնելու նպատակով։

—

Կիվէստ (Ֆլորիդա).—Երկու հիւսիսամերիկական զրահանաւ մեկնում են դէպի Մէկսիկայի ափերը հարկաւոր դէպքում ամերիկացիների գոյքն ու ստացուածքը պաշտպանելու համար։

—

Նիւ-Եօրկ.—Օկլադէմա նահանգի Դէնէսէսում ուրագանը քանդել է 50 տուն։ Պէրրիում շէնքերը ջնջվել են։ Կան սպանվածներ և վիրաւորներ։ Զափազանց ջնջվել են Օկլադէմայի միւս քաղաքները ևս, նաև Կոլորադօ նահանգում, ուր շատ մարդկային զոհեր կան։

ՀԵՌԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6—8 ապրիլի

Կուլջա.— Իլիյի երկրի բոլոր ցեղերը անկախ հռչակեցին իրանց և բոլոր կապերը չինական կառավարութեան հետ խզեցին։ Հանրապետականներին չաջողվեց փոխել տալ մօնգօլներին իրանց վճիռը։ Տեղ-տեղ ընդարձակներ են երկուստեք կորուստներով։ Սիբիրցի զբաղվողները նոյնպէս սկսել են յուզվել։

—

Պէկին.—Եկաւ Տանշաոյը կաբինէտի մի քանի անդամների հետ։ Մնացածները սպասվում են։

—

Կաշգար.—Մարտի 31-ին Ակսուսի զօրաբանակի զինուորները ոչնչացրին Զէնի դաստային և Վանսոյֆոյի շրջանապետին։

—

Վիէննա.—Չինական կառավարութիւնը բանակցութիւն է վարում տեղական զեղջային ու հողային բանակների հետ 450,000 ֆունտ նորից աւանս ստանալու մասին։ Չինաստանը խոստանում է իր թնդանօթներն ու ռազմամթերքները պատուէր տալ աւստրիական գործարաններում։

Ուրգա.—Լուրերի համաձայն, մօնգօլները Իւանշիկայի ուղարկած մարդկանց գալու դէպքում հրաժարվելու են բանակցել նրանց հետ։

ԳՈՐԾԱԴՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6—8 ապրիլի

Պետերբուրգ.—(Պաշտօնական). Լէնայի ոսկուարդիւնաբերութեան շրջանում կատարված վերջին դէպքերը անհրաժեշտութիւն են ստեղծում տեղում կատարել բազմակողմանի քննութիւն, թէ ինչից առաջ եկաւ գործադուլը և թէ ինչպէս ստեղծվեցին այնպիսի պայմաններ, որոնց ժամանակ հարկ եղաւ շարժումը զսպել զինված ոյժով։ Յիշեալ քննութիւնը կատարելու է անձամբ Իրկուտսկի գեներալ-նահանգապետ եգէրմէյստէր կնեազէվը, որ արդէն մեկնել է Պետերբուրգից։ Նրան օգնական առևտրի մինիստրութեան կողմից ուղարկված է հանքային ինժենէր Միխնակին։

—

Պետերբուրգ. — Հոկտեմբերեանները երկուշաբթի օրը հարցապնդում կը ներկայացնեն Պետական Դումայում Լէնայի հանքերի մասին։

—

Իրկուտսկ.—Բօդայբօյից ստացված պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, տեղում սպանվել են 107 բանւոր, վէրքերից մեռել են 84. բացի դրանից կան 210 վիրաւորներ։ Թաղում դեռ չէ եղել։

—

Իրկուտսկ.— Ուտէսխատի, Անդրէէվի և Վասիլեվի հանքերում 245 բանւոր աշխատանքները վերսկսեցին։ Լէնայի միւս հանքերում դրութիւնը անփոփոխ է։ Սպանված բանւորների թիւը հասնում է 150-ի վէրքերից մեռածների հետ միասին։ Դեռ դժբաղդութեան [illegible] ցին դործադուլին վերջ դնել, եթէ աշխատավարձը աւելացվի, բայց ընկերութեան ներկայացուցիչ Սօլօդիլօվը կտրականապէս մերժեց։

ՎԱՍՓՈՒՐԱԿԵՐԵՆ

—o—

ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՐԸ ԵՒ ՀԱՅՔ

V*)

Սահմ.-ռամկավար տեսակէտ

Կ. Պոլիս, 24 մարտ

Հայ-քաղաքական կուսակցութեան շարքին մէջ, այս կուսակցութեան դիրքը բացառիկ է։ Անիկա աւելի գաղափարական կապ մըն է, որ կը միացնէ մեկնոյն սկզբունքով սնած անձնաւորութիւնները, առանց սակայն գործօն մասնակցութեան քաղաքական շարժման մէջ։ Այս տեսակէտով սահմ.-ռամկավարութիւնը կը ներկայացնէ աւելի բարոյական ազդակ մը, քան թէ իրական ոյժ մը։ Սահմ.-ռամկավարութիւնը առանց իր շարքերուն մէջ ունենալու շատ ստուարաթիւ զանգուած մը, գաղափարական կապով մը իրեն կը միացնէ գրեթէ կազմակերպուած կուսակցութիւններէն դուրս մնացած հայութեան ստուար մեծամասնութիւնը։

Սահմ.-ռամկավար կուսակցութիւնը՝ վարիչ ոյժն է կեդրոնի խմբակցութեան, որ ոչ-կուսակցական մեծամասնութեան համախմբումն է։ Այս պայմաններուն մէջ սահմ.-ռամկավարութիւնը ստիպուած էր նկատի առնել կեդրոնին կարծիքը, որով այս երկու կազմակերպութիւնները համերաշխ գործելու համաձայնեցան, միևնոյն ատեն ընդունելով ազգային հաւաքական մեծ զանգուածով մը արտայայտուելու պէտքը։

Իրենց մէկ ուրիշ սկզբունքն ալ պատրիարքարանին հեղինակութիւնն յարգելու սկզբունքն էր, որ երեսփոխանական ընտրութեանց առթիւ ազգ. ժողովի մէջ բացուած վիճաբանութեանց ընթացքին պաշտպանեցին թէ կեդրոնի և թէ սահմ.-ռամկավար կուսակցութիւնները։

Հետևաբար ինքնագլուխ կերպով թիւրք ոեէ կուսակցութեան մը յարելու համար առանձին յարաբերութիւններ մշակելու պէտք չտեսան։ Ուստի վարչութեան կազմած «համերաշխական ժողովներուն» մասնակցեցան միշտ կեդրոնին հետ յարելով սա տեսակէտին, թէ թիւրք կուսակցութիւններու ազդայի համար տուած հաւատիքները և խոստումները նշանակութենէ զուրկ են, և ընտրական խնդրոյն մէջ հայոց թուական համեմատութեան հաստատուն մէրճումներու ընտրութիւնը ապահովելու խնդիրը միակ անմիջական հաւատիքը կրնայ ըլլալ ոեէ թիւրք կուսակցութենէ ընծայուած։

Այս բանակցութիւնները շատ երկար տևեցին, բազմաթիւ անգամ վիժումի մը վտանգին ենթարկուելով. ի վերջոյ խզումը անխուսափելի եղած էր,—ինչպէս գրած էի քանի մը օր առաջ,—երբ յաւիտենական հերոսները համերաշխական ձեռնարկներու՝ Սարգիս Սուին, Հայկ Խաչատրեան և Նորայր Օհանեան երևան չգային՝ երբ անբաժանելի երրորդութիւն, և կեդրոնը չառաջնորդէին դէպի նուաստացում, դէպի Դաշնակցութեան դարշապարները, անոր միջոցաւ յարելու համար Իթթիհատին։

Սահմ.-ռամկավարներուն կը մնար կամ ընդվզիլ այս նուաստութեան դէմ, կամ պատասխանատուութիւնը մերժելով համակերպիլ։ Տակաւին ոչ մին ըրին և ոչ միւսը սահմ.-ռամկավարները, որոնց պատուիրակ Վահան Թէքէեան, վերջին հաւաքման, ուր իբր թէ Դաշնակցութեան և կեդրոնի հաւասարաշխութիւնը նուիրագործուեցաւ, վերապահ դիրք բռնեց և իր կուսակցութեան հաւանութիւնը զլացաւ տալ մինչև առաջիկայ շաբաթ։

Հետևաբար տակաւին սահմ.-ռամկավարութեան տեսակէտը որոշ չէ։ Սակայն այժմէն կրնայ գուշակուիլ, թէ սահմ.-ռամկավարութիւնը հարկադրուած պիտի հետևի կեդրոնին։

Շառայ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄՇԱԿԻ» ՅՕԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Նամակ խմբագրութեան)

Թիֆլիս, 5 ապրիլի

Հանգուցեալ Գաբրիէլ Սունդուկեանը իր մահից մի քանի օր առաջ ցանկութիւն յայտնեց «Համալի Մասլահաթներ» դիքից 400 օրինակ նուիրաբերել «Մշակին» ի պատիւ այդ լրագրի 40-ամեայ յոբելեանի։ Կատարելով ցանկութիւնը բարեյիշատակ ամուսնուս, սրանով ուղարկում եմ յարգելի խմբագրութեանդ այդ գրքի վերջին հրատարակութեան 400 օրինակները՝ մի արկղի մէջ դասաւորված։

Սօֆիա Սունդուկեանց

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ապրիլի 6-ին Թիֆլիսի Ժողովարանի անդամների ընդհանուր ժողովը կայացրեց մի վերին ատիճանի կարևոր որոշում. գնել Գօլովինսկի պրոսպէկտի վրա ներկայ ցերկի շինութիւնը ժողովարանի համար յատուկ շէնք շինելու, ուր ճարտարապետ Գր. Տէր-Սարգսեանի կազմած ուրուագծով նաև պէտք է լինի թատրօնական դահլիճ և բեմ 800 հանդիսականների համար։

Ժողովարանի աւագների զեկուցումից պարզուեց, որ կարելի կը լինի շինութիւնը սկսել կառուցանել հինգ տարուց, երբ Ժողովարանը բաւականաչափ միջոցներ կունենայ, իսկ հողը գնելու համար յատկացնել այժմ պատրաստի եղած գումարը՝ մօտ 160,000 ր.։

Այս որոշումը շատ նշանաւոր է նախ՝ ի հարկէ Ժողովարանի անդամների համար, որոնց թիւը հասնում է 1000-ի. այնուհետև կենսական նշանակութիւն ունի տեղական լեզուներով տրվող ներկայացումների համար։

Շնորհիւ այն հանգամանքի, որ եղած թատրօնները համարեա բացառապէս շահագործվում են օպերային կամ ռուսաց դրամատիկական խմբերի կողմից, ուստի տեղական լեզուներով տրվելիք ներկայացումների համար հնարաւորութիւն չէր լինում յատկացնել յարմար օրեր, և բացառապէս այս հանգամանքով է բացատրվում, որ դէպուք Հայոց Դրամ. Ընկերութիւնը իւրաքանչիւր տարի կրելով անագին դէֆիցիտ թատրօնական գործում հնար չունէր գոնէ շաբաթը երկու անգամ ներկայացում տալու, այլ ստիպված խաղում էին շաբաթական մի անգամ, այն էլ «Նաֆս» երկուշաբթի օրերը։

Այսպիսով Ժողովարանի շէնքը և թատրոնը շինվելով անագին գործ կը տանայ մեր թատրօնական գործը։

Սրանով մենք ուզում ենք հայ ինտելիգենցիայի առանձին ուշադրութիւնը հրաւիրել դէպի Թիֆլիսի Ժողովարանը. պէտք է ասած, որ այս հաստատութիւնը՝ գուցէ և արդարացի կերպով՝ մատնված է եղել մինչև օրս մի տեսակ անտարբերութեանը և նոյնիսկ արհամարհանքին հայ ինտելիգենցիայի, որովհետև այնտեղ բացի Թէթխանէ՝ մի առանձին զրաւիչ և քաջալերող զբաղմունք և ոյժ չէ եղել. սակայն վերջերս երևի ամենքը նկատած կը լինէին, թէ ինչպէս ջանքեր են գործ դրվում այս հաստատութիւնը բարոյապէս բարձրացնելու. վերցրէք, օրինակ, տարեկան խոշոր նուիրատուութիւնները զանազան կուլտուրական նպատակների համար, դասախօսութիւնները, զանազան լեզուներով տրված ներկայացումները և այլն, գործեր՝ որոնք կարող էին զարդ համարվել որ տեսակ կուզէք համակրելի հաստատութեան համար։

Իսկ այնուհետև՝ երբ նաև Ժողովարանը ունենալու է և թատրօնական շէնք, արժէր որ հայ ինտելիգենցիան խորթ չը վերաբերվէր Թիֆլիսի Ժողովարանին և շտապէր օր առաջ անդամակցելու և իր բարի ու զեղեցիկ խորհուրդներով աւելի զարկ տար վերջերս ձեռնարկված Ժողովարանի համար կրելի գործերին։

Շիրին

Մ. ՄԱՏԷՆՃԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

I

Կիրակի, ապրիլի 8-ին, Ժողովրդական Տանը Ներսիսեան դպրոցի ուսուցիչ Մ. Մատէնճեանը կարդաց դասախօսութիւն հայոց գրականութիւնից մի շատ հետաքրքրական հարցի մասին՝ «Ովքե է հայերիս ամենամեծ բանաստեղծը» թեմայով։

Մ. Մատէնճեանը ամենից առաջ ուզեց պարզել, թէ ինչ է հասկանում ինքը «բանաստեղծ» ասելով և ովքեր են բանաստեղծներ։

*) Տես «Մշակ» № 72.

րից մեծը։ Այդ յեղյեղուկ հարցերը հակիրճ կերպով պարզելուց յետոյ (բանաստեղծ է չափածոյ երկերի հեղինակը)՝ դասախօսը կանգնեց այն տեսակէտի վրա, թէ ճշմարիտ բանաստեղծութիւնը պէտք է ունենայ հետևեալ յատկութիւնները։ 1) պէտք է լինի քնարական՝ լեզուի պարզութիւնը, դիւրանչիւնութիւնը, 2) ազգային և 3) նկարչական պատկերաւորութիւնը։

Դասախօսը մի առանձին, այդպէս ասած՝ պատմական նշանակութիւն է տալիս ազգային ընոյթին. «Բանաստեղծութեան մանաւանդ սկզբնական շրջանում,—ասում էր դասախօսը,—շատ կարևոր են ազգային խնդիրները, որոնք ընդհանուր հետաքրքրականութիւն ունեն, որովհետև, եթէ անհատական ընոյթ ունենայ այդ շրջանի բանաստեղծութիւնը և բանաստեղծը երգէ իրանը—իր այգին, իր պարտէզը և այլն,—այնքան ուժեղ տպաւորութիւն չի թողնի, քանի որ մէկը կարող է ունենալ այգի, պարտէզ և այլն, միւսը՝ ոչ»։ ըստ որում,—ըստ դասախօսի,—սկզբնական շրջանում մեծ դեր է կատարում հէնց այդ տպաւորութիւնը։

Այդ մի շարք տեսական հարցերից յետոյ՝ յարգելի դասախօսը ուղղակի պատասխանեց իր դրած հարցին և ապա սկսեց հիմնաւորել իր կարծիքը։

Մեր ամենամեծ բանաստեղծն է՝ Ռափայէլ Պատկանեանը։

Եթէ համեմատութիւն գտնենք Գամառ Քաթիպայի ու նրանից առաջ և յետոյ՝ մինչև օրս եղած բանաստեղծների միջև, կը տեսնենք, որ միայն նրա բանաստեղծութիւններն են, որ միաժամանակ բարձր են թէ արուեստով և թէ բովանդակութեամբ. նրա բանաստեղծութիւններն են, որ օժտված են բոլոր երեք յատկութիւններով էլ. նախ՝ նրանք քնարական են՝ լեզուն մաքուր և գիւրանչիւն. տեղ-տեղ համարեա այժմեան աշխարհաբարը։ Դասախօսը, որպէս լեզուի նմուշ, մի ընտիր կտոր կարդաց «Զարմայր նահապետի մահը» պօէմայից, որ տպված է առաջին անգամ բանաստեղծի հօր՝ տէր-Գաբրիէլի «Արարատում» 50-ական թուականներին, և բոլորիս յայտնի ախորժալուր «Մեզնից շատ առաջը», որ եղանակված և տարածված է որպէս մի սիրուն երգ։ Նկարչականութեան օրինակ բերեց «Մշակը», որ գեղարուեստական մեծ արժանիքներ ունի, և որից «առաջ չեն անցել մեր օրերի բանաստեղծները». միւսներից կարդաց «Թիֆլիսի քէֆը» և «Ենարիչը»։ Գալով ազգային գծին՝ դասախօսը, հակառակ իր տեսակէտին, համարեա ոչինչ չասաց նրա ազգային գաղտնի նուիրված, նրա քաղաքական իդէալների և թիւրքահայոց հարցին վերաբերող հրաշալի ոտանաւորների մասին, որոնք Գամառ Քաթիպայի բանաստեղծութեան և անհատականութեան quinta essentia-ն է կազմում։ Դասախօսը բաւականացաւ միայն յիշելով, որ նա ազգային կեանքից և աւանդութիւններից նիւթեր էր առնում իր ոտանաւորների և պօէմների համար («Բաղ. Վարդանի մահը»)։

Ռափայէլ Պատկանեանը իրաւամբ շատ բեղմնաւոր բանաստեղծ էր. բանաստեղծութեան բոլոր տեսակների մէջ նա փորձել է իր ոյժը և ամենի մէջ էլ օրինակելի. բայց իր բազմատեսակ ստեղծագործութիւնից՝ յայտնի է նրա ուժեղ ազդեցութիւնը յետագայ բանաստեղծների վրա. «Ռ. Պատկանեանի բանաստեղծութեան մէջ են գտնվում արդի բանաստեղծութեան բոլոր սաղմերը, և յաջորդ բանաստեղծները միայն նրա ստեղծած ճանապարհի մանրամասնութիւններն են մշակել»—ասաց դասախօսը։

Ապա խօսեց Գամառ-Քաթիպայի մանկական ոտանաւորների մասին, որոնք մանկական գրականութեան գոհարներ կարող են համարվել մինչև այժմ էլ։ Այդ տիպի ոտանաւորներից յիշեց «Հա ծաղեցաւը», «Գառնուկ սիրունը», «Անձրև անձրև ցած արին», «Բաղիկ բաղիկը» և վերջապէս «Կատուն եկաւ փիսիկ փիսիկը», որոնք եթէ բարձր էլ չը լինեն, գոնէ հաւասար արժանիք ունեն Ղ. Ազայեանի մանկական ոտանաւորների հետ։

Բանաստեղծութեան յիշած ճիւղերը՝ սկիզբ առնելով Ռ. Պատկանեանից՝ զոյութիւն ունեն մինչև այժմ. բայց նա ունի մի գիծ ևս, որից համարեա զուրկ են նոր և նորագոյն բանաստեղծները (բացառութեամբ Ալ. Մատուրեանի)։ Դա հեղինակի գիծն է, իմաստը, որ շատ սուր է մանաւանդ «Մայրաքաղաքում կրթված օրիորդ» և այլ ոտանաւորների մէջ, որտեղ բանաստեղծը մարտակում է հայերի օտարասիրութիւնը։

Դասախօսութեան ընթացքում դասախօսը համառօտ կերպով ընդգծեց նրա պատմա-գրական նշանակութիւնը. Ռ. Պատկանեանն էր իսկական բանաստեղծութեան սկիզբ դնողը։ ճիշդ է, նրանից առաջ կային աշուղական ոտանաւորներ (Սայաթ-Նովա և այլք), անհատական բանաստեղծներ, ինչպէս Ե. Աղամալեանը («Երկու ձեռքին երկու մամ»), Թաղիադեանը և վերջապէս Մխիթարեանների վերածնութեան բանաստեղծները, բայց դրանց բոլոր ստեղծագործութիւններն էլ կամ լեզուի անմատչելիութեան, կամ կրօնական ու անժամանակակից և կամ թէ անհատական լինելու պատճառով չը ստացան այնպիսի լայն ժողովրդականութիւն, ինչպէս Ռ. Պատկանեանի բանաստեղծութիւնները։ Նա էր, որ, մի տեսակ մշուշի միջից, դառաբանաստեղծութեան ուղիղ ճանապարհը, ազգային ուղղութիւնը, հասկացաւ ըստ էի պահանջը և փոխանակ աղջիկ և վարդ երգելու՝ երգեց ազգի վիշտն ու ձգտումները, տառապանքն ու յոյսերը։

Այստեղ ի միջի այլոց յիշենք դասախօսի այն յոռետես կարծիքը, թէ անհատական բանաստեղծութիւնը հող չունի և շուտով կը մեռնի։ Սակայն նա անհատական է համարում բանաստեղծին այն տեսակէտից, որ նա իր անհատի սիրելու և ատելու ուժեղ թափը դրեց իր ոտանաւորների մէջ և ինքը, որպէս մի ամբողջի տիպ, հանդէս եկաւ իր բանաստեղծութիւնների մէջ։

«Ահա թէ ինչու Ռափայէլ Պատկանեանն է մեր ամենամեծ բանաստեղծը»—ծափահարութիւնների տակ վերջացրեց դասախօսը։

Այժմ անցնենք դասախօսութեան էական կէտերի քննութեանը։ Գ. Սիմէօնեանց

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Սովը Խիվայի խանութիան մէջ

Նոր-Ուրդէնշ, 24 մարտի

Առհասարակ այս 1911 և 1912 թուականներում շատ երկիրներ են տառապում սովի ճիրաններում, բայց ամեն տեղ մեծ ու փոքր չափով օգնողներ կան, սովեալների մասին մտածողներ կան։

Խիվայում ժողովուրդը տանջվում է սովից. լսում ենք, թէ մինչև անգամ մահվան դէպքեր են եղել. սա դեռ ներկայ մինչև մարտի 24-ը, բայց ուր է դեռ յունիսը, նոր հունձը։

Ժողովրդի մեծ մասը—80%—ուտելու ոչինչ չունի. բացի ուտելու ոչինչ չունենալուց, չունի և ոչ մի բան ծախելու, որ կարողանայ փող շինել և գրաստով 10—20 ֆունտ ալիւր գնել (հիմա շուկաներում հաղիւ է գտնվում, որ պուդերով առնես. մեծ մասը 5—10—15 ֆ. մի անգամ առնում ալիւր ու ցորեն) մի երկու օր իր երեխաների և ընտանիքի գոյութիւնը պահպանելու։

Ծախել են՝ ինչ ունեցել են, ինչ որ կարելի էր փող շինել, մի խօսքով՝ թէ լծկան եզները, թէ կթի կովերը և թէ տանն ունեցած միակ ձին ու էշը։ Եթէ պարտք խընդրելու տեղ կար, պարտք են արել. եթէ տոկոսով վերցնելու տեղ կար, վերցրել են. նոր բերքն էլ համարեա բոլորը ծախված է. տոկոսները աղքատ ժողովրդի մէջ բարձրացված է 100%-ով։

Հիմայ շուկաներն են բերում ծախելու իրանց տների տանիքների գերանները, վայտերը դրանց թողնելով բացօդեայ, Աստուծոյ խնամքին։

Այս երկրում գոյութիւն չունի բարեգործութիւնը։

Ժողովուրդը յուսահատ թափառում է փողոցից փողոց սոված, բայց հարուստը ուրախ է. նա աշխատում է առնարի նոր շրջան գտնել, նոր միջոց հարել։

Խանի գլխաւոր մինիստրի ժամ մի խօսակցութեան ժամանակ վաճառականներից մէկը ասել էր, որ կարելի է հացը քիչ էժանանայ. նա զարմացել է, թէ ի՞նչպէս կարելի է որ էժանանայ, քանի որ ինքը 40,000 պուդ ցորեն ունի ճանապարհին։

Ցանկալի էր, որ թուրքաց լրագիրները, մանաւանդ Օրէնբուրգում և Կազանում հրատարակվող լրագիրները, աւելի լայն ծաւալով վերաբերվէին այս հարցին։ Տեղիս ժողովրդի մէջ երկրի բերքից համարեա ոչինչ չը կայ, հացահատիկները ստանում են Օրէնբուրգից և Անդրկասպեան երկրից, ալիւրը՝ Բագուից, Վլադիկավկազից, բրինձը նոյնպէս Բագուից, որը Պարսկաստանից է բերված ամբողջ հապարաւոր վերստերից։

Օրվայ գներն են—դեռ քիչ էժանացած—ցորենի պուդը 3 ր. 20 կ., ալիւրի 1-ին տեսակը 3 ր. 60 կ., 3-րդ տեսակը 3 ր. 40 կ., կորեկը 2 ր. 20 կ., բրինձը 6 ր. պուդը և այլն։ Տաշաուզի

Քառաձայն խումբը Կազգուանում

Կազգուան, 27 մարտի

Վաղուց բացակայում էր մեր քաղաքում քառաձայն երգեցողութիւնը, բայց այս տարի, շնորհիւ նոր հրաւիրված ուսուցիչ Դ. Ղազարեանի, յաջախ ենք լսում կանոնաւոր բազմաձայն երգեցողութիւն։ Դեռ տարվայ սկզբին նա կազմակերպել էր մի համերգ, որը ունկնդիրներին կարողացաւ գեղարուեստական բաւականութիւն պատճառել։ Այնուհետև առաջ եկան երեկոյթներ, ցիրկոյթներ և այլն, որտեղ դարձեալ փայլում էին Ղազարեանի խմբերը։ Բացի այդ բոլորից՝ ահա չորրորդ ամիսն է, ինչ մեր եկեղեցում երգում է Ղազարեանի ղեկավարութեամբ 50—60 հոգուց բաղկացած քառաձայն խումբ, որի պատճառով այս տարի համարեա կիրակի և տօն օրերին լիքն է եկեղեցին երկսեռ բազմութեամբ։ Գուրգէն

Ցուսահատ վիճակ

Ներքին-Ագուլիս, 8 ապրիլի

Մարտի 27-ին ամբողջ օրը ձիւն եկաւ և լոյս 28-ի առաւօտը սառնամանիք արեց։ Ամբողջ ծառապտուղները ցուրտը տարեց, և վնասը շատ-շատ է։ Շերամի որդերը դուրս են եկած, իսկ տերևները ցուրտը տարել է։ Մօտիկ դիւղօրայքից թթի տերևները բերում են ֆունտը 20—25 կօպէկով։ Խեղճ գիւղացոց դրութիւնը դժուարին է։ Բոլորիս յոյսը դրված է այժմ բոժոժի վրա։ Զ. Սուլխանեան

—

Հոգեհանգիստ Դ. Սունդուկեանցի յիշատակին

Նովորոսսիյսկ, 30 մարտի

Ամսիս 26-ին կ. Հ. Բար. Ընկերութեան տեղիս վարչութիւնը, թատերասէրների խումբը և ժողովրդի մեծ բազմութիւն տեղիս հայոց եկեղեցում պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարեցին մեծ դրամատուրգ, «Լէպօյի» ստեղծագործող Գաբրիէլ Սունդուկեանի համար։ Հանդուցեալի կտակը «Մշակին» ուղղված՝ մեծ ազդեցութիւն ունեցաւ տեղիս հայերի վրա։

Հմ. Մակաբեան

—

Մեծ-Պասի ժամը Թալում

Քարվանսարա, 24 մարտի

Դպրոցներին այցելութեանս միջոցին, վերջերս գտնվում էի Թալա գիւղում։ Երեկոյեան ժամը 5-ից անց էր, երբ լսեցի զանգակների ձայնը։ Գործս վերջացրել էի և ցանկանում էի անցնել միւս գիւղը։ Ներկայ եղողների քէֆէնոցը կասկած յարուցեց մէջս. պատճառը հարցրի, ասացին. «Էն ա՝ էս ա մեր օրը, փառք Աստուծու, աչքովդ տեսար. էն ա իրիկները զարկում է տղին կամ երկցփոխին, որ զանգակները քաշեն, իսկ ինքը, մեր ծերունի տէր-Խաչատուր հայրը, ժամի երես չէ տեսնում, տանը պառկած է. էսպէս ենք անց կացրել Մեծ-Պասը։ Անցեալ կիրակի եկաւ ժամ, պաշտում ա՝ բաւ, 4 կին խոստովանվեցին, որ պատարագին հաղորդվեն,—ասացին գիւղացիք,—բայց պատարագ չարեց. խոստովանվողներից մէկին ուրիշ գիւղ գնաց հաղորդվելու. ահա մեր օրը»։

«Էհ, որ մինն ես ասում,—ասաց մի ուրիշը։—Սոզանց երեխէն մեռել էր, տէրտէրը քնաց-ոչ թաղել, մթամ կարում ա քնայ. իրան հօրեղբայրն էր թաղել»։ Եւ այսպէս անվերջ էին գիւղացիների գանգատները. ես անցայ ուրիշ գիւղ։

Գարնանացանը վաղուց են սկսել։ Արտերը շատ լաւ են երևում, եթէ որևէ վնաս չը հասնի, այս տարի լաւ հաց կը լինի։

Մեսրոպ ք. Եղիշեան

—

Վանեցուները սխալվեցին իրանց հաշուում

Աբցեանիկ, 22 մարտի

Աշնանից համարեա թէ մեր Ղարսամում սպասվում էր կատարեալ սով։ Գիւղացիք յիշելով 1881 թ.՝ միանգամայն յուսահատվել էին, նկատի ունենալով և անցեալ 1911 թ. անտանելի ձմեռը, որը մեծ կորուստ պատճառեց գիւղացիներին։ Մի քանի գիւղացի տղերուկներ շտապեցին հաւաքել ցորենները այն մտքով, որ շուտով սոմարի գինը կը հասնի 10—15 ր. (սօմարը 2 պուդ է). մանաւանդ Ղաթարի հանքի հայ և թուրք հարուստ վաճառականները օրական հաղարաւոր ուղտեր բարձած՝ աւելորդ, ցորեն և գարի էին բերում Ղաթարի հանքը և տեղաւորում ամբարներում։ Բայց բնութեան ողորմութիւնը հասաւ մեր Ղափանի խեղճ ժողովրդին. ընկան ցորենի գները և այժմս էլ ընկնում են։ Աշունքից սկսած ցորենը ծախվում էր 2 ր. 80 կ. պուդը, իսկ գարին 2 ր. 20 կ., բայց ներկայումս 2 ր. ցորենը, իսկ գարին 1 ր. 40 կ.։

Զմեռը անցաւ շատ աջող և չը տեսնված. միշտ ձիւնի տեղ մէկ-մէկ անձրև էր տեղի ունենում, կարծես մայիս լինէր։ Գիւղացիք արդէն փետրվարի 25-ից սկսել են գարնանային ցանքսերը մշակել ուրախ սրտերով, սպասելով և աշնանային ցանքսերից առատ հունձ։ Բայց կայ մի աւելի անբուժելի ցաւ գիւղացիների համար. դա մեր հայ վաշխառուներն են իրանց խոշոր տոկոսներով։

Յովս. Տէր-Յարութիւնեանց

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐՈՒՄ

Էջմիածին, 8 ապրիլի

Ապրիլի 7-ին, ս. Աւետման տօնին, տեղի ունեցաւ Գէորգ Ե. Կաթողիկոսի անուան առաջին յիշատակութիւնը, հայրապետական գահից սև քօղի բարձումն, Հայրապետի եկեղեցի գալը, հայրապետական խորհրդանիշների մատուցումն և հայրապետական մաղթանք՝ հետևեալ կարգով։

1) Պատարագին, «Առաքելոցից» յետոյ, նախ քան Հայրապետի անուան յիշատակութիւնը, պատարագիչ արքեպիսկոպոսը առենարանութեամբ ծանուցեց նոր Հայրապետի հաստատութիւնը. այդ ժամանակ խոշոր սեւաքօղեալ գահը վերացվեց բեմի վրայից. պատարագիչ սրբազանը աւարտելով առենարանութիւնը՝ առաջին անգամ յիշատակեց նոր Հայրապետի անունը։

2) Պատարագի վերջին «Տէր ողորմեայի» ժամանակ միաբանութիւնը շուրջառազդեստ առաջնորդեց Վեհին իր բնակարանից Տաճար, ուր Իշման Սեղանի առաջ դրված էր հայրապետական գահը. բայց Հայրապետը կանգնեց գահի մօտ պատրաստված բազմոցի վրա։

3) Պատարագի վերջին, պատարագիչը բեմի վրայից կարդաց Աւետարանը, երգեց «Թագաւոր փառաց Աստուած հոգի կենդանարար» շարականը. բեմից իջաւ պատարագիչը, աւանդատնից դուրս եկան լուսաբաշխը՝ ձեռքին բռնած կաթողիկոսական խաչ-գաւազան, Հայրապետի առան կրող գաւազանակիր վարդապետը, երկու վարդապետներ՝ հայրապետական դրօշները բռնած, երկու շաթիրները կարմիր զգեստով արծաթազարդ մականները ձեռքներին, և պատարագիչ սրբազանի առաջնորդութեամբ մօտեցան Վեհին։ Պատարագիչ սրբազանը մատուցեց Հայրապետին հայրապետական խաչն ու գաւազանը և համառօտ բանախօսութեամբ հրաւիրեց բազմել հայրապետական գահի վրա. դրօշակիր վարդապետները կանգնեցին Վեհի հանդէպ Իշման Սեղանի աջ և ձախ կողմը, գաւազանակիր վարդապետը ասան ձեռքին բարձր բռնած՝ գահի ետևը, իսկ շաթիրները կանգնեցին նրա աջ և ձախ կողմը։

4) Երգվեց «Հրաշափառ Աստուած» շարականը. Հայրապետը առաջացաւ դէպի գահը, կանգնեց գահի առաջ, և կատարվեց հայրապետական մաղթանքը։ Վեհը օրհնեց ժողովրդին ու բազմեց գահի վրա. միաբանութիւնն ու ժամաւորները համբուրեցին Հայրապետի աջը՝ շնորհաւորութիւն մատուցին, որից յետոյ միաբանութիւնը շուրջառազդեստ զանգահարութեամբ առաջնորդեց Վեհին վեհարան, երգելով «Որ զնորոն աստուածային» շարականը։ Հայրապետը վեհարանի արտաքին դռան առաջ պահպանիչով արձակեց միաբանութեան ու ժողովրդին և բարձրացաւ վեհարան։

Գ. Գ.

ՆԱԻԹԱՑԻՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Բալախանի, 3 ապրիլի

Նաւթային շրջանում աչքի ընկնող ֆիրմաներից մէկն էլ Հ. Ս. Մելիքեանի նաւթահանքն էր, որը երկրորդ տեղն էր բռնում և բաւական թւով բանուորներ ու ծառայողներ ունէր։

Այդ նաւթահանքը, որի աղբիւրները առատ էին և, պէտք է ասած, գործերը բաւականին աջող էին գնում, անցաւ օտարի ձեռքը։ Նաւթահանքերը վաճառել են 2,000,000 բուբլով. գնողները այդ գումարից 200,000 ր. պահել են իրրև գրաւական, որպէսզի մինչև նաւթահանքը յանձնելը (1 մայիսի 1912 թ.) աղբիւրները չը պակասեն, «դօբիչան» չը քչանայ։

Բանուորները, ծառայողները, հիմնվելով մի շարք փորձերի վրա, հաւատացած են, որ երբ հայի հանքերը անցնում են օտարի ձեռքը, ամենակարճ ժամանակում հայ բանուորներից, ծառայողներից 95%-ը հեռացվում են և փոխարինվում հայութեան չը պատկանող տարրերով։ Այդ պատճառով էլ բանուորների և Մելիքեանների միջև այժմեանից սկսվել է յարաբերութիւնների լարումը։ Մելիքեան ժառանգներից, ինչպէս լսում ենք, ամենք բանուորութեանը հէնց այժմվանից ուզում են բաւարարութիւն տալ, սակայն միւսներն անտարբեր են։

Վերջին օրերումս դօբիչան սկսել է օրական մի քանի հազար պուդ պակասել. վատ նշան է. ըստ երևոյթին, բանուորները ուզում են նիւթական վնաս հասցնել։

Մելիքեանները շատ լաւ գիտեն, որ իրանք նաւթահանքերից ձեռքները լուանալով, իրանց հայ բանուորներին օտարը չէ պահելու և մի գեղեցիկ օր յայտնելու է, թէ 15 օրվայ ոտ ճիկդ ստացիր և հեռացիր, այնպիսի մի գումար, որով կարելի է միմիայն մի ընտանիք, տնային իրեղէնները փոխադրել քաղաք...

Բանուորները, ներկայ պայմաններում, համոզված են, որ իրանք ոչինչ պահանջ անել չեն կարող. բայց Մելիքեանները, որոնք փոքր ի շատէ յայտնի են հայ հասարակութեանը իբրև հասարակական գործիչներ, գիտակից կապիտալիստներ, կարծում ենք, այնպիսի մի բաժին կը հանեն իրանց ծառայողներին, որով, հակառակ դէպքում, երբ օտարը նրանց կը հեռացնէ ծառայութիւնից, գոնէ կարելի լինի իրանց ընտանիքը տեղափոխել հայրենիք և մինչև նոր գործ գտնելները սովամահ չը լինել։

Նաւթի գինը դարձեալ բարձր է. սակայն աշխատանքի կանոնը մեռած. նորանոր ձեռնարկութիւնների դիմող չը կայ, ուստի նաւթաշխարհում կանոնը սպառում է մեռնել։

Ս. Գարագաշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Կիրակի, ապրիլի 8-ին, Վանքի մայր տաճարում պատարագից յետոյ կատարվեց մաղթանք Թագաւոր Կայսրի արևշատութեան համար, որից յետոյ կարդացվեցին գոհաբանական աղօթքներ Ամենայն Հայոց Հայրապետի հաստատման առիթով։ Հանդիսադիրն էր թեմս ժամանակաւոր կառավարիչ Եփրեմ եպիսկոպոսը։

✦ Վաղը, ամսիս 11-ին Թիֆլիսի քաղաքական պատգամաւորութիւնը, ներկայանալով Կովկասի Փոխարքային, կը մատուցանէ դումայի որոշումը առ Թագաւոր Կայսրը ունեցած հպատակութեան զգացմանց մասին, որ արտայայտվում է լեռնաշղթային երկաթուղու կառուցման թոյլատրութեան առիթով։

✦ Պետական Դումայի անդամ Պ. Միլիւկովը Թիֆլիսում եղած ժամանակ այցելեց Դիզուբէի վրաց եկեղեցին, դիտեց և ծանօթացաւ նրա հետ մանրամասնաբար։ Հետաքրքրվեց նաև այս եկեղեցու ծխականների ընտրութեան գործով։ Ինչպէս յայտնի է, այս եկեղեցին անցեալ տարի վէճի առարկայ եղաւ և նոյն եկեղեցուն և վրացի ծխականները վիճել սկսեցին այն նկատմամբ, թէ արանցից ումն է պատկանում եկեղեցին և թէ ո՞ր լեզուով պիտի կատարվի արանում ժամերգութիւնը։ Սակայն վերջերս պարզվեց, որ այդ եկեղեցին պիտի պատկանի վրացիներին, որովհետև նրա ծխականների մեծ մասը վրացիներ են, նաև այս եկեղեցու կառուցման գործին ժամանակին նախաձեռնող եղել են վրացիները։

✦ «Баку» թերթի խմբագիր Ֆ. Վերմիշեանի խնդրագիրը իր պատժի փոփոխման և գրաւականով ազատելու մասին՝ Թիֆլիսի դատաստանական պալատի կողմից թողնված է անհետևանք։

✦ Մօտ ժամանակներս կաւարտվի Աբասթումանում կառուցվող սանատորիումի շէնքի կառուցումը։

✦ Թիֆլիսեցիներին յայտնի վիրաբոյժ բժիշկ Ֆ. Բօշէնբաումը, որը վերջերս տիֆով վարակվելով ծանրապէս հիւանդացել էր, ներկայիս ապաքինվում է։

✦ Պետերբուրգից Թիֆլիս վերադարձաւ շաբաթ, ամսիս 7-ին, երեկոյեան ժամը 10-ին, Ռուսաստանի և Կովկասի հայ-կաթոլիկների հոգևոր կառավարիչ Սարգիս վ. Տէր-Աբրահամեանը, որ Պետերբուրգ և Հռոմ էր գնացել պաշտօնական գործերով։ Մեզ հասած տեղեկութիւններին նայած, նա իր առաքելութեան նպատակները աջողութեամբ է կատարել։

✦ Հռչակաւոր ջութակահար Բ. Հիւբերմանը այցելել է վրացի քանդակագործ Ի. Նիկոլաձէի աշխատանոցը։ Ի. Նիկոլաձէն պատրաստում է ջութակահարի կիսաքանդակը։

✦ Քանդակագործ Ի. Նիկոլաձէն մօտ ժամանակներս կը ձեռնարկէ վրաց հանգուցեալ բարեգործ Դ. Սարաջիվի արձանի քանդակման գործին։ Արձանը քանդակվելու է մարմարից։

✦ Ներկայումս տպագրվում է մի առանձին ժողովածու, որի մէջ մտնելու են այն բոլոր յօդուածներն ու գրուածքները, որոնք լոյս տեսան պարբերական մամուլի այլ և այլ օրգաններում հանգուցեալ բարեգործ Դ. Սարաջիվի մահվան առիթով։ Ամեն մի յօդուած յիշեալ ժողովածուի մէջ տպագրված կը լինի այն լեզուով, որով նա լոյս է տեսել այս կամ այն լրագրի մէջ, ունենալով կցված նրանցից իւրաքանչիւրի ռուսերէն թարգմանութիւնը։

✦ Ապրիլի 6-ին Բաքուում, տեղական վրաց գաղութի նախաձեռնութեամբ, ի յիշատակ Գ. Սունդուկեանի, կազմակերպվել է մի ներկայացում, խաղացվել «Պէպօ» կատակերգութիւնը։ Ներկայացմանը եղել են նաև հայ ինտելիգենտներից շատերը։

✦ Այս օրերս Թիֆլիսում կը սկսէ լոյս տեսնել ռուսերէն լեզուով մի շաբաթաթերթ «Кавказская Недѣля» վերնագրով։

✦ Վրաց բանաստեղծ իշխ. Վախտանգ Զամբակուր Օրբելեանիի ծննդեան 100-ամեակի լրացման առիթով՝ ապրիլի 8-ին վրաց գիմնազիայում կազմակերպվեց մի ցերեկոյթ, նուիրված բանաստեղծի յիշատակին։

✦ Վրաց ազնուականութեան կալուածքների վարչութեան մէջ երևան է հանված 5000 բուբլու կորուստ։ Թէ ումի ձեռքով է կատարված այս յափշտակութիւնը, դեռ ևս պարզված չէ։

✦ Ապրիլի 8-ին, առաւօտեան ժամը 6-ին, քաղաքիս դուրս, այգիների շրջանում գտնված է սպանված զինուոր Վասիլի Տինանվի դիակը, առանց բանի մահացման հետքերի։

✦ Ապրիլի 7-ին, Կուր գետից՝ լուղորդ Վասիլի Քօքօրիձէն դուրս հանեց Գէորգ Յովհաննիսեանին, 16 տար., որը խեղդվում էր։

✦ Թիֆլիսում վախճանվեց վրաց կրթված կալուածատէրերից մէկը՝ իշխ. Զաքարիա Էրիսթավին։ Հանգուցեալը ամբողջութեամբ համակրում էր վրաց հասարակական գործերին։

✦ Իսմ. պ. Մամրաձէն ձեռնարկեց Աբարվի գետից դէպի Մխաքցկվի և Լամի գիւղերը ջուր անցկացնելու գործին, յիշեալ գիւղերի հողերի ոռոգման համար։

✦ Մեզ խնդրում են հաղորդել, որ յանձնված է տպագրութեան և շուտով լոյս կը տեսնի հաշտպահութեան դասընթացքների հիմնադիր Նիկ. Աբրահամեանի «Ձեռնարկ առևտրական հաշտպահութեան» նոր գիրքը հայերէն լեզուով։ Ձեռնարկին նիւթ են ծառայում բակալէյնի, կօլօնիալնի, երկաթի, բամբակի և այլ տեսակ ապրանքների առևտուրը։ Գիրքն արժենալու է 2 բուբլի։

✦ Ապրիլի 1-ին Բուխարեստի բանտից Խարկովի և Ռիգայի բանտերն են տեղափոխվել թւով 24 վրացիներ, որոնք դատապարտված են տաժանակիր աշխատանքների զանազան ժամանակներով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Սատրոպոլ, 22 մարտի

Ամսիս 10-ին ծխ. դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ ուսուցչական խմբի ձեռնարկութեամբ մանկական ներկայացում։ Դրված էին 1) «Заработалъ» 2 պատկ. Լուկաշէվիչի և 2) «Գաղանիք» 2 արար. կօմեդիա Սարաջեանի։ Վերջում ցոյց տրվեց «Գարուն» կենդանի պատկերը, որի ժամանակ մանուկներից մէկը արտասանեց Յովհ. Յովհաննիսեանի «Նոր գարուն» բանաս-

КАКАО ВАНЪ-ГУТЕНА

8—5

Главный складъ у Торговаго Дома Гебертъ фонъ ШВАРЦТАЛЬ и К-о, Одесса.

տեղծութիւնը։ Թէ պիէսաները և թէ կենդանի պատկերը պատրաստված էին բաւական խնամքով, աշակերտները ապատ կերպով կարողանում էին խաղալ իրանց ստանձնած դերերը, մեծ հաճոյք պատճառելով փոքրիկ հանդիսականներին։ Բացի ծնողներից ներկայ էր բաւականին կողմնակի հասարակութիւն, այնպէս որ այս անգամ զարմանքով պէտք է յիշենք տեղական հայ գաղութի ցոյց տուած հետաքրքրութիւնը դէպի իր դպրոցը, հակառակ սովորական դպրոցական հանդէսների։ Գովելի է և մանկավարժական կազմի եռանդը։

Ե. Գուլաբեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալքալաք, 31 մարտի

Ախալքալաքի հայոց ծխ. դպրոցների մանկավարժ. և հոգաբարձ. խորհուրդների մարտի 28-ի խառն նիստը, որ գումարվել էր նորերս վախճանված անզուգական դրամատուրգ Գաբրիէլ Սունդուկեանի մահվան առիթով, յոտնկայս յարգելով նրա յիշատակը և ի նկատի ունենալով նրա վերջին կամք-կտակը, խոյս տուեց, հանգուցեալի ցանկութեան համաձայն, ցոյցերից և որոշեց՝ 1) Ներկայացնել «Պէպօն» և արդիւնքը յատկացնել «Պէպօյի» արձան կանգնեցնելու համար կազմվող ֆոնդին։ 2) Ներկայացումից առաջ կարդալ կենսագրական քննադատական հաւաքօտ դասախօսութիւն։ 3) Ա. բաժանման մի չքաւոր սանի ազատել ուսման վարձից մինչև աւարտելը, մատակարարել նրան հագուստ, դասագրքեր և պիտոյքներ, անուանելով «Սունդուկեան» թոշակաւոր։ 4) Դպրոցի բարձր դասարանների սաներին ծանօթացնել Սունդուկեանի կենսագրութեան և գրական գործունէութեան հետ։

Նախագահ խառն ժողովի՝
Ե. Գիւլխանդանեան
Անդամ քարտուղար խառն ժողովի՝
Մ. Լ.

—

Դիլիջան, 31 մարտի

«Հօրիզոնի» № 64-ում կարմելը փոքրում է «հերքել» «Մշակի» № 50-ի մէջ իմ տրուած «սխալ տեղեկութիւնները դպրոցական շէնքի մասին»։

Իր ժամանակին ստուգապէս իրականութիւնն եմ արձանագրել։ մարտի 1-ին, երբ գրվել է իմ թղթակցութիւնը, դպրոցական շէնքը թերի էր և ոչ «աւարտված», հասարակութիւն անտարբեր, անաշակից հոգաբարձութեան։

Իսկ թէ շէնքը պիտի աւարտվի և «կը վերջանայ մինչև ամառ», իմ գրածից յետոյ, անձնուէր և անզուգական հոգաբարձու Սմբատ Մելիք-Մարտիրոսեանի անհատական «անդուլ ջանքերով, նրա կրած նիւթական և բարոյական զրկանքների շնորհիւ», Կ. Հ. Բ. Ընկերութիւնից ստացած 400 ռուբլով, հասարակութեան մի մասի մէջ վերջերս (իմ գրածից շատ յետոյ) մի կերպ «հաւաքած» 200 ռուբլով և նոյն «հասարակութեան որոշ խաւի (որ ճնշիչ մեծամասնութիւնն է կազմում իրապէս) անտարբերութեամբ» մեծագումար ծախսերի հանդէպ, որ պիտի աւելացնի դպրոցի դէֆիցիտը և ոչ բիւջէն,—պ. Կարմելը կարող է վստահօրէն համոզվել, որ՝ «հանրայինը ամբողջ հասարակութեան կողմից ստացութեան է տրված Դիլիջանում», իրողութիւն, որ արձանագրել ու շեշտել էի իր ժամանակին, և որ կարիք չունէր ոչ մի «հերքման»։

Աւսիր

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ «Տիտանիկ» շոգենաւի խորտակումը այնպիսի այժով եղաւ, որ ջուրը միանգամից մտաւ սենեակները և կարեց ազատվելու ճանապարհները. կատաստրոֆայի զիշերվայ խաւարը միւս կողմից նպաստեց զոհերի թիւին. ազատվելու ձգտողները մթութեան մէջ իրանց նետում էին ջուրը։

✦ Պարզվում է, որ եթէ ազատաբար նաւակների թիւը «Տիտանիկի» վրա պակաս չը լինէր, այնքան մարդկային զոհեր ևս չէին լինի։ Սակայն միւս կողմից ասում են, որ խորտակման ժամանակ այդ նաւակների մեծ մասը չարդվել է։

✦ Միացեալ-Պետութիւնների ժողովուրդները ապգային սգի մէջ են «Տիտանիկի» խորտակման առիթով։ Ցաճարները լի են աղօթողներով։ Եւրօպական պետութիւնների ներկայացուցիչները շտապում են իրանց ցաւակցութիւնը հեռագրով արտայայտել։

✦ «Տիտանիկ» նաւի խորտակման ժամանակ զոհված միլիարդէր Հուրգէյմի կինը՝ Նիւ-Եօրկում առաջարկել է մի միլիարդ ազատարար նաւ ուղարկելու համար։ Լլոյդ ապահովագրական ընկերութիւնը կորած ապրանքների համար վճարելու է 20 միլիոն ռուբլի։

✦ Նիւ-Ֆաունլէնդի մօտ խորտակված աշխարհիս ամենամեծ շոգենաւ «Տիտանիկը» պատկանում էր անգլիական «Ուայտ-Ստառ» ընկերութեանը, որ նաւի կառուցման վրա ծախսեց աւելի քան 20 միլիոն ռուբլի։ Նաւի երկարութիւնը 1/4 վերստ էր և մի ժամում անցնում էր 38 վերստ։ Իւրաքանչիւր ժամում նաւի հսկայական մեքենան լափում էր երեք վագոնից աւելի քարածուխ։

✦ «Տիտանիկ» շոգենաւի խորտակման ժամանակ նաւի վրա գտնվող 7 միլիոնատէրերը առասպելական գումարներ են խոստանալիս եղել, որպէսզի իրանց տեղ տան ազատարար նաւերում։ Սակայն իրարանցման ժամանակ խօսողները միմեանց հրելով ընկնելիս են եղել մէկ-մէկ ջուրը և խեղդվել։ Նաւի վրա եղել են նաև շատ ռուսներ։

✦ Պարզվեց, որ «Տիտանիկի» նաւապետին «Ուայտի» նախագահը խոստացել էր 25,000 ռ. մրցանակ տալ արագութեան մրցակցա հաստատելու համար։ «Տիտանիկը» տանում էր 100,000 արկղ սուրճ ու թէյ, իսկ Անտվերպէնում վերցրեց 4 միլիոնի թանգագին իրեր։ Նիւ-Եօրկում շոգենաւի խորտակումը առաջ է բերել յեղափոխութեան նման յուզմունք։

✦ Պետական Դումայի անդամ Բէլոուսովը հեռագիր ստացաւ, որ Լէնսկի հանքերում սպանվել են 270, վիրաւորվել են 250 բանւոր։ Իւրաքանչիւր զինւոր արձակեց 15 գնդակ։ Առաջին իսկ համազարկից բանւորները գետին ընկան։

✦ Ստատս-սեկրետար Կոկովցեվը պահանջեց մանրամասն տեղեկութիւններ Լէնսկի ընկերութեան և բանւորների բանակցութեան մասին։ Ամբողջ յանցանքը ընկերութեանն է։

✦ Պետական Դումայի անդամները սաստիկ յուզված են Լէնսկի հանքերում պատահած անլուր աղէտից։ Հոկտեմբերեանների հարցապնդմանը միացան կադէտները և սոց.-դեմոկրատները։

✦ «Новое Время»-ի տեղեկութիւնների համաձայն, Լէնսկի հանքերում սպանվել և վիրաւորվել են 400 բանւոր։

✦ «Н. Вр.»-ն Լէնսկի հանքերի մէջ տեղի ունեցած սոսկալի դժբաղդութեան առիթով ասում է, որ հանքերի ընկերութեան վարչութիւնը յամառութեամբ աշխատում էր գործադուլին տալ քաղաքական բնաւորութիւն, մինչդեռ բանւորները ներկայացրել էին սոսկ չափաւոր տնտեսական պահանջներ։ Լէնսկի ընկերութիւնը, հակառակ օրէնքի արգելման, վարձատրում էր բանւորներին տալօններով ու իր սեփական խանութի մթերքներով։ Գործադուլը այժով ճնշելու պահանջը ընկերութեան կողմից հանդիսանում է ուղղակի պրովոկացիա։

✦ Պաշտօնապէս հաղորդվում է, որ այնքան մեծ անուն հանած՝ շնորհիւ «Դաշնակցութեան» գործի՝ Վիլնայի դատաստանական պալատի անդամ Լրժինը մարտին ներկայացրեց հրաժարականի խնդրագիր, որին և այն ժամանակ տրվեց օրինական ընթացք։ Ներկայումս Լրժինը մեկնել է Վիլնա իր անձնական գործերի առիթով։

✦ «Нов Время»-ն հաղորդում է, որ «Դաշնակցութիւն» կուսակցութեան դատավարութիւնը պետական դանձարանին նստեց 300,000 ռուբլի։ Թարգմանները ստացան 1,500 ռ., իսկ էքսպերտները—խոշոր գումարներ։

✦ Տաշկէնտում զինւորական դատարանը մահվան դատապարտեց 10 մարդու, միևնոյն ժամանակ որոշելով միջնորդել թեթևացնելու նրանց պատիժը։

✦ Իտալիան, ինչպէս երևում է նշաններից, Դարդանէլը ռմբակոծելու է երկրորդ անգամ։ Այժմ Դարդանէլի մուտքի մօտ դրված են 500 ականներ և կենտրօնացած է ամբողջ թիւրքական նաւատորմը։ Կ. Պոլսի շրջակայքում կազմ պատրաստ կանգնած է 100 հազարանոց զօրաբանակ։

✦ Անգլիական մամուլի կարծիքով Թիւրքիան կարող է խաղաղութեան մասին բանակցութիւն սկսել միմիայն պարլամենտի ներկայ շօվինիստական կազմը արձակելուց յետոյ։

✦ Նանկինում դրութիւնը օրհասական է։ Մեծ պետութիւնների հիւպատոսատները շտապով օգնութիւն են խնդրում։ Կռիւները շարունակվում են։ Սպանվածների թիւը անհամար է։

✦ Ներկայումս մոնգոլական և մանջուրական իշխանների միջև բանակցութիւններ են վարվում կազմելու միապետութիւն մանջուրական դինաստիայի գլխաւորութեամբ։

✦ Այս ամառը գերմանական կայսր Վիլհելմը այցելելու է ֆինլանդական ջրերը։

✦ Լիվադիա կանչվեց ռուսաց սինոդի օբէր-պրօկուրօր Սաբլերը։

✦ Անգլիացի ինժենէրները հետազօտելով Կամենէց-Պոդօլսկի հողերը՝ կարուկ կերպով որոշել են, որ այնտեղ կան նաւթի և զանազան հանքերի ընդարձակ հետքեր։

✦ Կովկասի Փոխարքայի կարգադրութեամբ այն մարդուն, որ ցոյց տուեց, թէ որտեղ է յայտնի Զէլիմխան աւազակապետը, տրվեց 3000 ռ. պարգև չեչէն ազգաբնակութիւնից առնված 150,000 ռ. տուգանքից։

✦ Անտանաբուժական գիտութիւնների մագիստրոս Ի. Նոնէվիչին Մոսկվայում աջողվել է գտնել մի շիջուկ, որ արմատապէս բժշկում է կատաղների սուր խլացաւը։

✦ Սենատը անհետևանք թողեց Գանձակի գաւառապետ Բէյուտի վճռաբեկ գանգատը, որին Թիֆլիսի նահանգական դատարանը դատապարտել է պաշտօնազրկութեան։

✦ Արդարադատութեան մինիստրը արգելք եղաւ Պետական Դումայի առաջարկութեանը կանանց ևս ընտրողական իրաւունքներ տալու։

✦ Պետերբուրգի աւստրիական դեսպան կոմս Վալէնսիան Պետերբուրգ է բերում Ֆրանց-Յովսէփ կայսրի սեփական նամակը, որով վերացվում են ռուս-աւստրիական լարված յարաբերութիւնների վերջին հետքերը։

✦ Հեռացած Բէլգարդի տեղ մամուլի գործերի գլխաւոր վարչութեան կառավարիչ կարգվեց Սարատովի նախկին նահանգապետ Ցատիշչեվը։

✦ Պետերբուրգում 72 տարեկան հասակում վախճանվեց «Вѣстникъ Иностранной Литературы»-ի նախկին հրատարակիչ և մի շարք գրուածքների հրատարակող Լէոնդին Ֆ. Պանտելէեվը։

✦ Պետերբուրգում երևան հանվեց աւստրիական լրտեսութիւն։

✦ «Голосъ Кавказа» լրագրի խմբագիրը դատի է կանչել զրպարտութեան համար «Русское Знамя»-ի խմբագրին։ Այս լրագրում մի յօդուած էր տրպված, որի մէջ ասված էր, իբր թէ «Гол. Кавк.»-ն Հ. Զ. Ա. Թաղիեվից 5000 ռ. էր ստացել նրա գործի մասին լռութիւն պահելու համար։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

6 ապրիլի

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ։ Պուրիշկեվիչի երկրորդ դասախօսութիւնը գրաւեց մեծ թիվ ունկնդիրներ։ Հետաքրքիր ընդունեցին և ճանապարհ դրին չեմ ծափահարութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մատակարարական խորհրդակցութիւնը բաւարարութիւն տուեց գլխաւոր բժշկական տեսչի միջնորդութեանը անյապաղ 200,000 ռ. յատկացնելու նրան անբերրիութիւնից վնասված վայրերի ազգաբնակութեանը բժշկական օգնութիւն ցոյց տալու համար։

Ֆինլանդական արքեպիսկոպոս Սերգիին յանձնարարված է մշակել ռուսաց սինոդի նոր կանոնադրութեան նախագիծ։

ՎԵՐԴԻՆ։ Օգաստոս Վիլհելմը ընկաւ աէրոպլանից և մեռաւ։

7 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ (Ուշացած)։ Ժող. լուս. մինիստրը հրահանգեց, որ այն հրէաները, որոնք անցել են միջնակարգ դպրոցների լիակատար դասընթացքը և արժանացել են աւարտման վկայականների, եթէ կամենան տալ լրացուցիչ քննութիւններ վկայականի թեանշանները բարձրացնելու համար, կարող են տալ այդ քննութիւնը առանց ի նկատի ունենալու տոկոսային նորման։

Ժող. լուս. մինիստրութիւնը թոյլատրեց կանանց գիմնազիաների ուսերորդ դասատան աշակերտուհիներին՝ ռուսերէնի և թեարանութեան աւարտման քննութիւն տալ միաժամանակ իրանց քննութիւնների հետ տղայոց գիմնազիաներում։

Ներքին գործերի մինիստրութիւնը խնդրում է յատկացնել 10 միլիոն՝ պետական մատակարարական դրամագլուխը աւելացնելու համար։

Սպիտակ Արծուի շքանշան շնորհվեց գլխաւոր ծովային-զինուորական դատարանի նախագահ Անդրէեվին։

Նահանգական դատարանը երկու ամսով բանտարկութիւն որոշեց «Совр. Слово»-ի խմբագիր Պրոշէցօվին այն տեղեկութեան համար, թէ Դումայի անդամ Պրօցէնկոն վարկաբեկված է Նէյդգարդտի բեվիզիայով։

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ։ Նացիոնալիստների համառուսական միութեան բաժանմունքի ժողովում Մոսովիլովը զեկուցում կարդաց երրորդ Դումայի գործունէութեան մասին։

8 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նէվայի վրա նաւագնացութիւնը բացվեց պաշտօնապէս։

Գրաւեց „Звѣзда"-ի այսօրվայ №-ը։ Խմբագիրը պատասխանատուութեան է ենթարկվում 129-րդ յօդուածով։

ՍՕՍՆՕՎԻՑԻ։ Զավերցեի գործարանում գործազուրկ արին 2000 բանւոր։

ՏԱԳԱՆՐՕԳ։ Իտալիանկա հանքում տեղի ունեցած պայթումի գործը քննվելու է նահանգական դատարանում մայիսի 5-ին։

ԽԱՐԿՈՎԱՅ։ Բացվեց արևելագիտութեան կայսերական ընկերութեան պրիամուրեան ճիւղը։

ԲԵՐԼԻՆ։ Կառուցվելու է ուղղափառ եկեղեցի, որի համար հանգանակված կայ 200,000 ռուբլի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ,

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՄՈՒԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վիներական (սիֆիլիս) հ.։
Բ. Դ. ԱԿԱՅԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՇԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Ֆ. ՄՈՒՐԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վիներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Գ. Ց. ԳՈՒՐԳԷՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ — 1—2 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Հաւաստագրերը ձրի։ Համախոսիրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ
1. 0—33

ԲԺԻՇԿ
Տ. ԳԵՈՐԳԲԵԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վելեմինսկայա փողոց, № 8.
(Կ. Հ.) 416. 100—94

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս (606), միզասեռական վիներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Սօլօլակ, Բէլուսօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տելէֆոն № 1175.
(Հ. Հ.Կ.) 888. 100—86

ԲԺԻՇԿ
ՅՈՒՍԻՖ ԼՈՒՍԻՆԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագիտ. թոքերի հիւանդութիւններ)
Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէլուսօվսկայա, № 66.
(Հ. Հ.) 130. 100—87

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.